

ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ  
ԱԶԳԱՅԻՆ ՊԱՏՐԻԱՐՔԱՐԱՆԻ

ԱՏԵՆԱԳՐՈՒԹԻՒՆՔ

ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎՈՅ

ՎԵՐԱԲԱՑՈՒՄ 1913-14 ՇՐՋԱՆԻ

ԵՐԵՎԱՆԻ ԱՆԱԿԱՆ ՎԵՐԱԿԱԶՄՈՒԹԵՆԷՆ ԵՏՔԸ

ՆԻՍՏ Բ.

16 Մայիս 1914



Տպագրութիւն Տ. ՏՕՂԸԱՄԱՃԵԱՆ

Կ. ՊՈԼԻՍ, Պապը-Սլի ձառտէսի, Թիւ. 49

1914



# ԱԶԳԱՅԻՆ ԵՐԵՍՓՈԽԱՆՔ

## ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ԵՐԵՍՓՈԽԱՆՔ

### ԵԿԵՂԵՑԱԿԱՆՔ (Ա. Վիճակ)

1. Տ. Եղիշէ Արքեպս. Դուրեան
2. Տ. Վահրամ Սանկունի
3. Տ. Զարմայր քհնյ. Կէզիւրեան
- 4.

### (Բ. Վիճակ)

5. Տ. Մաղաքիա Արքեպս. Օրմանեան
6. Տ. Գրիգորիս Ծ. Վ. Պալազեան
7. Տ. Երուանդ Ծ. Վ. Բերտաճեան
8. Տ. Սմբատ Ծ. Վ. Գաղազեան

### (Գ. Վիճակ)

9. Տ. Շմայեակ Արքեպս. Դիմաքսեան
10. Տ. Մաղաքիա Եպիսկ. Տէրունեան
11. Անանիա Վ. Հազարապետեան
12. Տ. Միքայէլ քհնյ. Աշենեան

### (Դ. Վիճակ)

13. Տ. Արիստակէս Ա. քհնյ. Զիզմէնեան
14. Տ. Խորէն Յարութիւնեան
15. Տ. Յուսիկ Քաջունի
16. Տ. Տաճատ Փաշայեան

### (Ե. Վիճակ)

17. Տ. Եղիշի Ծ. Վ. Պապեան
18. Տ. Շմայեակ Զահ. Էքսէրճեան
19. Տ. Բարձր Յազըմճեան
20. Տ. Արէլ Երէջեան

### ԱՇԽԱՐՀԱԿԱՆՔ

### (Ա. Վիճակ)

### Էյուպ Ս. Եղիա

21. Օննիկ էֆ. Մինասեան

### Խապիւղ

22. Պետրոս Էֆենտի Հալաճեան
23. Պետրոս Խորասանճեան
- 24.

### Մագրիկիւղ

25. Երուանդ Էֆենտի Պէյազճեան
26. Թազուր Արեւեան
27. Տօքթ. Մալխասեան
28. Յակոբ Պոյաճեան
29. Յովհաննէս Խազըմճեան
30. Սարգիս Պէհրէկեան
- 31.

### Պէտլիւքսէլէ

32. Արշակ Էֆենտի Ալոյաճեան
33. Յովսէփ Գաղազեան

### Սան-Սթէֆանո

34. Գէորգ էֆ. Ալանեան

### Սրբազիւղ

35. Խսիկ Էֆենտի Սըվաճեան
36. Տ. Ք. Ստեփան Էֆենտի Թէրզեան

### (Բ. Վիճակ)

### Բերա-Դասը Բիւշա

37. Աստուածատուր Էֆենտի Իւլաւորեան
38. Արամ Շ. Վ. Հալաճեան
39. Արմենակ Քալսեյեան
40. Գէորգ Թորգոմեան
41. Գրիգոր Շահլաբեան
42. Յովհաննէս Չէօկի. եան
43. Սարգիս Սիւսանեան
44. Տր. Վ. Թորգոմեան
45. Յովսէփ Գարեան

### Գարեալ-Դիւղ

- 46.

### Գուրուշէշմէ

- 47.

### Պէշիկիւղ

48. Տրդատ Պէյ Տաւեան

### Ֆէրիկիւղ

49. Եղուարդ Էֆենտի Գարակէօզեան
50. Շրանտ Ասատուր
51. Մարկոս Նաթանեան
52. Յակոբ Պահրի

### (Գ. Վիճակ)

### Գատրիկիւղ

53. Անտոն Էֆենտի Թալազ
54. Աղաթի Ալասեան
55. Եղուարդ Շիրինեան
56. Ներսէս Օհանեան
57. Մկրտիչ Արզարեան
58. Պեննէ Թորոսեան
59. Սարգիս Էսմէրեան

### Եֆնի-Գարու

60. Պենտոն Էֆենտի Տէր Բէնճիւս
61. Վահան Փափազեան

### Պալաթ

62. Տօքթ. Կարապետ Էֆենտի Եղուարդեան
63. Յարութիւն Էֆ. Մոստիշեան
64. Սարգիս Սրենց
65. Շրանտ Անդրէասեան

### Սկիւտար Եֆնի-մանյալէ

66. Թորգոմ Էֆենտի Պոյաճեան
67. Հմայեակ Խոսրովեան
68. Վահան Սուրենեան

# ԱԶԳԱՅԻՆ ԸՆԴՀ. ԺՈՂՈՎ

## ԲԱՅՈՒՄ 1914—1915 ՆԱՏԱՇՐՁԱՆԻ

### ՆԻՍՏ Բ.

16 ՄԱՅԻՍ 1914

ՆԱԽԱԳԱՀ. — ՍՐԲԱՋԱՆ ՊԱՏՐԻԱՐԻ ՀԱՅՐ

ԱՏԵՆԱՊԵՏ. — ԳԱՐԻԲԵԼ ԷՖԵՆՏԻ ՆՈՐԱՏՈՒՆԿԵԱՆ

## ՕՐԱԿԱՐԳ

Կանոնագիր Ազգ. սրոց եւ սեղեկագիր Համարակալութեան եւ Նախաձեռնութեան Դիւաններու:

(Նիստը տեղի ունեցաւ Ղալաթիոյ խորհրդարանը ի ներկայութեան 53 երեսփոխաններու որոց թիւը յանգեցաւ յետոյ 65ի):

ԱՏԵՆ. ԷՖ. — Ներկայ երեսփոխանաց թիւը 53ի հասած ըլլալով՝ առեանք կը բանանք:

### ՀՐԱԺԱՐԱԿԱՆ ԵՐԵՍՓՈԽԱՆՈՒԹԵՆԷ

ԱՏԵՆ. ԷՖ. — Եղեցական երեսփոխաններէն Տ. Անանիա Վրդ. Բաբերդի Առաջնորդ ընտրուած եւ իր պաշտօնատեղին մեկնած ըլլալով, հրաժարական տու-

ուած է երեսփոխանութենէ. ահաւասիկ սոյն գիրքը:

(Առեանագիր էֆ. Կարդաց հետեւեալ գրեւորը):

Վսեմաշուք Առեանապետ Էֆենտի

Ազգ. Պատկ. Երեսփ. Ընդհ. Ժողովոյ

Բաբերդի վիճակայնոց ընտրութեամբ եւ Ազգ. Կեդր. Վարչութեան Խառն Ժողովոյ որոշմամբ, կոչուած ըլլալով Բաբերդի Առաջնորդական պաշտօնին կը մեկնիմ վիճակս, հովուելու համար ինձ յանձնուած հօտը:



443155



Հեռահաճար, կը մատուցանեմ Պատկ.  
Ժողովոյդ իմ հրաժարականս երեսփոխա-  
նութենէ, մաղթելով ի Տեառնէ արդիւնա-  
ւորել Պատկ. Ժողովոյդ աշխատութիւն-  
ներն ի պայծառութիւն Ս. Եկեղեցւոյս եւ  
յօգուտ ազգիս:

Մնամ խորին յարգանք  
Անանիա Վ. Հազարապետեան

ԱՏԵՆ. ԷՖ. — Այս հրաժարականը բնա-  
կանաբար կ'ընդունի ժողովս եւ իր տեղ  
ուրիշը ընտրելու համար յանձնարարու-  
թիւն կ'ըլլայ Համագումար ժողովին:

### ԸՆՏՐՈՒԹԻՒՆ ՆԱԽԱՔՆԵՂ ԴԻԻԱՆԱՅ

ԱՏԵՆ. ԷՖ. — Ներքին կանոնադրի  
տրամադրութեան համաձայն՝ այսօր պէտք  
է կատարենք Նախաքննիչ զիւանսերու  
ընտրութիւնը, զիւանս իր պատրաստած  
ցուցակը ժողովիդ կը ներկայացնէ:

### ՁԵՌՆՀԱՍՈՒԹԵԱՆ ԴԻԻԱՆ

Տ. Հմայեակ Արքեպիս. Դիմաքսեան  
Տոք. Ստեփան Էֆէնտի Թեքլեան  
« Նազարէթ » « Տաղաւարեան

### ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹԵԱՆ ԴԻԻԱՆ

Հրանտ Էֆէնտի Ասատուր  
Մարկոս « Նաթանեան  
Աստուածատուր Էֆէնտի Խաչատրեան

### ՀԱՄԱՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ ԴԻԻԱՆ

Խաչիկ Էֆէնտի Սըվաճեան  
Տիգրան « Մանուէլեան  
Եղուարդ « Շիրինեան

### ԿԱԼՈՒԱԾՈՅ ԴԻԻԱՆ

Գեորգ Էֆէնտի Ասլանեան  
Յովիմանէս « Խազուլեան  
Սողոմոն « Տ. Ազարեան

### ՅԱՐԱԲԵՐԱԿԱՆ ԴԻԻԱՆ

Յարութիւն Էֆէնտի Մոստիչեան  
Տոք. Վահրամ « Թորգոմեան  
Յարութիւն « Շահրիկեան

### ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ ԴԻԻԱՆ

Աղէքսանդր Էֆէնտի Փանոսեան  
Ռուբէն « Ջարդարեան  
Օննիկ « Ջիվիէսարաֆ

### ԻՐԱՒԱՍՈՒԹԵԱՆ ԴԻԻԱՆ

Տ. Վահրամ Արքեպիս. Մանկունի  
Արիստակէս Էֆէնտի Գասպարեան  
Տոք. Տէվլէթ « Տատրեան

### ՆԱԽԱՁԵՌՆՈՒԹԵԱՆ ԴԻԻԱՆ

Դաւիթ Էֆէնտի Տ. Մովսէսեան  
Լեւոն « Տէմիրճիպաշեան  
Պետրոս « Խորասանեան

### ԵԼԵԻՄՏԻՑ ՅԱՆՁՆԱԽՈՒՄԲ

Թորգոմ Էֆէնտի Պոյաճեան  
Միքրդատ « Հայկազն  
Յարութիւն « Ճանկիւլեան  
Յարութիւն « Դարբինեան  
Սարգիս « Պէյրեան

ԱՏԵՆ. ԷՖ. — Եթէ զիտողութիւն չու-  
նիք այս ցուցակը վաւերացուած կը նը-  
կատենք:

ՁԱՅՆԵՐ. — շատ լաւ:

### ԴԱԽԱՆԵՐԷ ՀՅՈՍԳՐԵՐ

ԱՏԵՆ. ԷՖ. — Ինչպէս կը լինէր տեսնել,  
վերջին անգամ թ. Պատրիարքը լրագրա-  
րական հրատարակութեան մը առթիւ հար-  
ցում ուղղած էր ժողովիս, որ յանձ-  
նուեցաւ պատկանեալ Նախաքննիչ զիւա-  
նս ի ընտրութիւն: Այս հարցման մասին  
զանազան լրագրական հրատարակութիւն-  
ներ եղած ըլլալով, գաւառներէ հեռադրեր  
հառած են զիւանսիս, որոնցմով վստահու-  
թիւն կը յայտնեն Ս. Պատրիարքին նկատ-  
մամբ եւ կը խնդրեն որ շարունակէ իր

պաշտօնը: Հարկ չկայ ըսելու որ, արդէն  
Պատրիարքի ան հրաժարականի խնդիր  
գոյութիւն չունի, եւ Ս. Պատրիարք Հայրը  
կը շարունակէ իր պաշտօնը: Եկած հեռա-  
դրները եւ նամակները կը հաղորդենք  
ձեզ իրեն գաւառի եւ Պոլսոյ ժողովրդեան  
բաղձանքը:

Պատրիարքարան Հայոց

Վսեմաշուք Ատենապետ Էֆ.

Ազգ. Երեսփ. Ժողովոյ.

Սրբազան Պատրիարքի դէմ եղած ա-  
նարգանքը զգուանօք կարգաւով թիրթի-  
րու մէջ, կը պահանջենք հրապարակային  
մերժում եւ օրէնքին տրամադրութեան  
գործադրութիւնը անարժան հրապարակա-  
նայ պաշտօնի մասին. պատճէնը թեր-  
թերուն:

Ռամկավար Ակումբ

Հնչակեան Մասնաճիւղ Սեբասիոյ

Վսեմաշուք Ատենապետ Էֆէնտի

Ազգ. Երեսփ. Ընդհ. Ժողովոյ

Թեմերնիս վստահութիւն ունի իր ուղ-  
ղամբա Պատրիարքին վրայ, հրաժարակա-  
նին մերժուիլը իր իրաւացի պահանջին  
զոհացում տրուիլը կը խնդրենք:

Դիւան Գաւառական Ժողովոյ

Նախագահ

Մասթիս Բահանայ

Ատենադպիր

Իսպիլեան

Ատենապետ

Չուխարկեան

Սրբազան Պատրիարք Հօր եղած անար-  
գանքին համար մեր պիտանքը յայտնելով  
կը խնդրենք որ հրաժարականը ետ տրուի  
ի դիմաց Ռամկավար կուսակ. կեսարիոյ

Ատենադպիր

Սաղրեան

Ատենապետ

Հալաբեան

Վսեմաշուք Ատենապետ Էֆէնտի

Ազգ. Երեսփ. Պատկ. Ժողովոյ

Սամաթիոյ եւ Նաուլը-Գարուի թաղե-  
ցիքս ցամաքմբ եւ նոզկանօք կարգացինք

Ժագ Սայապալեանի մը ստորագրութեամբ  
հրատարակութիւն մը մեր սիրեցեալ Պա-  
տրիարքին՝ Տ. Տ. Ջաւէն արքեպիսկոպոս  
Տ. Եղիանանի հասցէին ուղղեալ. որուն  
հետեւանօք հրաժարական մատուցած է  
Պատկ. Ազգ. Ժողովոյդ:

Ստորագրեալքս՝ կուգանք թախանձա-  
նօք խնդրելու Պատկ. Ժողովէդ, որ բարե-  
հաճի իր գահուն վրայ կրկին տեսնելու  
փափաքնուս դոհացում տալ, եւ Ժագ-Սա-  
յապալեանի հանդէպ պարտ ու պատշաճ  
տնօրինութիւնն ընել:

(Ստորագրութիւն)

### ՀԱՐՅՈՒՄ ԵՐԵՍՓՈՒՍԱՆԱՅ

ԱՏԵՆ ԷՖ. — Թէեւ ըստ մեր կանոնի  
ո եւ է հարցում կամ հարցապնդում նիս-  
տին բացումէն քանի մը ժամ առաջ պէտք  
է արուի, բայց, սա վայրկեանին հարցում  
մը ներկայացուած է մեզ, եւ որովհետեւ  
կը տեսնեմ որ կարեւոր է կը յանձնեմ ձեռ  
ուշադրութեան:

(Ատենադպիր Էֆ. կարդաց հետեւեալ  
գիրքը.)

Պատկ. Դիւան Ազգ. Ընդհ. Ժողովոյ

Վանայ «Աշխատանք» թերթին կ'ի-  
մացուի թէ ոստիկանութիւնը խուզարկած  
է Աղթամարայ Կաթողիկոսարանը, մայրա-  
վանքը, կղզիները եւ յարակից շէնքերը:  
Կուգէի իմանալ Կեդր. Պատ. Վարչու-  
թիւնէն:

(1) Թէ ինչպէ՞ս յարգուած են այս պարա-  
գայի մէջ հայ կրօնական-ազգային հաստա-  
տութիւններու եւ բնակարանի անբռնա-  
բարեխիղճութիւնն երաշխաւորող օրէնքները:

(2) Ի՞նչ միջոց ձեռք առնել կը խոր-  
հուի տեղական իշխանութիւններու կողմէ  
ցոյց տրուած այս սնվսահուրեան վըր-  
դովիչ արարքը լուսարանելու համար:

Աղթամարայ Երեսփոխան

Ա. Վալամեան



Ն. ՉԱՔԱՐԵԱՆ ԷՖ. — Յանուարի վարչութեան կը պատասխանեմ որ Աղթամարի խորհրդարանի մասին ու եւ է տեղեկութիւն առած չենք. բայց, լրագրական հրատարակութեանց վրայ խնդիրը կը քննենք եւ անշուշտ արդիւնքը պիտի հաղորդենք ժողովիդ:

ԱՏԵՆ. ԷՖ. — Կարծեմ այսչափը բաւական է, եղած հարցումը կը զրկենք վարչութեան, որպէս զի, մօտաւոր նիստի մը մէջ տեղեկութիւն բերէ մեզի:

### ԿԱՐԳ ԽՆԴՐՈՑ

ԱՏԵՆ. ԷՖ. — Օրակարգի անցնելէ առաջ, պէտք կը զգամ ներկայացնել ձեզ խնդրոց կարգին մէջ գտնուած եւ ներկայ նստաչափանին ժողովոյ զբաղման առարկայ ըլլալիք խնդիրները. տաքակոյտ չունիմ որ Պատկ. Ժողովդ պէտք եղած ջանքը եւ ուշադրութիւնը կը նուիրէ այս խնդիրներուն արդիւնաւոր կերպով լուծման համար: Նախեւ առաջ իբրեւ օրակարգի առաջին խնդիր ունինք ազգային տուրքի կանոնադրելը, որուն քուէարկուելը այնքան կարեւոր է Պատրիարքարանի մատակարարութեան տեսակէտով. ասոնցմէ վերջը կուգայ ազգային վարժարանաց ներքին եւ կազմական կանոնադրներու խնդիրները. ասկէ զատ ներկայացուած է Զօհրապէֆի մէկ առաջարկութիւնը, որ զրկուած է Դաստիարակութեան զիւանին, եւ անոր տեղեկադրովը վերադարձած է ժողովի. այդ խնդրով կրնանք զբաղիլ անջատ կերպով. Կայ նաեւ Ամենայն Հայոց Հայրապետին մատուցանելի բաղձանքները ու նախորդ եւ նախկին Կրօնական ժողովոյ համարատուութիւնները, որոնք ապուած ուցրուած են ձեզ: Պատրիարքարանի վերակազմութեան ծրագիրն ալ յանձնուած է նախաձեռնութեան զիւանի նախաքննութեան. ասոնցմէ զատ կայ նաեւ Վանօրէից եւ ամուսնական խնդիրներու վերաբերեալ կանոնադրեր՝ որոնք Վարչութեան կողմէ պիտի ներկայացունին մեզ, կը յուսանք որ, ժողովը ասոնք հետզհետէ նը-

կատողութեամբ առնելով՝ կը վիճարանի եւ կը լրացնէ նեւեղ այս նստաչափանին մէջ:

Ա. ԷՖ. ՍՐՄԵՆՑ. — Ես նամակ մը ունիմ, կը խնդրեմ որ կարդացուի, հարցումը բնական է: Նախաձեռնութեան զիւանին թէ ինչո՞ւ չէ բերուի Դատը զիւղի խնդրոյն վերաբերեալ ապա տասխանի:

ԱՏԵՆ. ԷՖ. — Ձեր թուղթին համար տեղեկութիւն տուցեք նախաձեռնութեան զիւանին եւ ապա տասխան արուեստը թէ իրենց քով այդ սի թուղթ մը չկայ, հիմայ զիւանին հնք Դատ տարակուսեալ զիւանին:

Ա. ԷՖ. ՍՐՄԵՆՑ. — Դատը զիւղի ուսուցչական խնդիրը 22 ամիս քաջընկէ յետոյ, այսօր ալ երբ պէտք կը տեսնուի յղելու նախաձեռնութեան զիւանին նամակը կը կորուսի: Ասիկա շատ զարմանալի է:

Գ. ՏԵՐ-ԿՍՄ. ՍՄԵՆՑ. ԷՖ. — Ասկէ 22 ամիս առաջ ստացարկ մը բրած էի ժողովիդ գաւառ շուրջ 5 կարեւոր կեդրոններու մէջ երբ կը որդ սկան վարժարաններ բանալու մասին, ժողովը Վարչութեան կարծիքը իմ մտաւ. եւ ծրագրին գործադրութեան օրինակները խորհելու համար Վարչութեան յղեց: Ցարդ ու եւ է պատասխան չէ բերուած, կարելի է հասկնալ յապաղման պատճառը:

ԱՐՇԱԿ ԷՖ. ԱՂՅԱՐԱՆ. — Այս հարցումը չափազանց զարմանալի կ'երեւայ ինձ: Դիտարկելով իմ բաւական առնել նախորդ Վարչութեան անդամ էր, իր պաշտօնաւարտութեան 16-ամիս օրով ինչո՞ւ չէ հետապնդել այդ խնդիրը, հիմայ ո՞ւր կ'է գտնուալի, միթէ իրենց պարտքը չէր պատասխան բերել:

ԴԱԽԻԹ ԷՖ. ՏԵՐ ՄՈՎՍԵՍԵԱՆ. — Սոյն, շատ զարմանալի է, ինչու իր պաշտօնավարութեան օրով չէ փնտռել այդ գործը:

Ա. ԱՂՅԱՐԱՆ ԷՖ. — Ո՛չ միայն զարմանալի, այլ եւ կատակերգական է այս հարցումը:

ԱՏԵՆ. ԷՖ. — Եթէ կան Ազգ. Ժողովին յանձնարարեալ այսպիսի խնդիրներ՝ Վարչութիւնը անշուշտ ջանադիր պիտի ըլլայ զանոնք լուծելու:

### ՕՐԱԿԱՐԳ

#### ԱԶԳ. ՏՈՒՐԻԻ ԿԱՆՈՆԱԳԻՐԸ

Նախաձեռնութեան եւ Համարակալութեան Դիւաններու տեղեկագրերը

ԱՏԵՆ. ԷՖ. — Ազգ. Տուրքի կանոնադրի մասին նախաձեռնութեան եւ Համարակալութեան զիւանները՝ առանձին տեղեկագրերով ունին. անոնք արդէն տպուած եւ ձեզ բաժնուած են: Անշուշտ ուսումնասիրած էք զանոնք. այժմ պիտի սկսինք անոնց քննութեան, սակայն, նախ եւ առաջ պէտք կը զգամ հարցնելու Վարչութեան թէ իր նախորդին պատրաստած այս կանոնագիրը կ'ընդգրկէ՞ մանրամասնութիւնները կրնան ճշգրտել յօդուածները առանձին առանձին կարգացուած առնել:

ՏՕՔԹ. ԴԱԽԻԹԵԱՆ ԷՖ. — Վարչութիւնը կ'ընդունի իր նախորդին պատրաստած կանոնագիրը եւ յօդուած առ յօդուած քննուած առնել իր կարծիքը պիտի յայտնէ: Իսկ նախաձեռնութեան զիւանի տեղեկագիրը անգործնական կ'երեւայ իր նոր ձեւովը, հետեւաբար անոր եզրակացութեան համաձայն չի կրնար գտնուիլ, ու կ'երաջնէ իր նախորդին տեսակէտը զոյգն փոփոխութիւններով զորս ինչպէս ըսի պիտի ներկայացնէ յօդուած առ յօդուած քննուած առնել:

Դ. ԷՖ. ՏԵՐ ՄՈՎՍԵՍԵԱՆ. — Վարչութիւնը Ազգ. Տուրքի խնդրոյն համար ծրագիր մը բերուի, որուն քննութիւնը նախաձեռնութեան զիւանին յանձնուած ըլլալով, ուրիշ ձեւ մը ներկայացնել ա-

ւելի նպատակայարմար դատուեցաւ Ազգ. Տուրքի գանձումը կանոնադրելու ու ապահովելու նպատակաւ: Գործադիր իշխանութիւնը հիմայ իր ծրագիրը կը պաշտպանէ: Բայց չկրնար մերժել նախաձեռնութեան զիւանի պատրաստած ծրագիրը, քանի որ Վարչութեան կանոնագրին քննութիւնը Ազգ. Ժողովոյ որոշումը յանձնուած էր իրենց քննուելով փոփոխութիւններ կրած: Ըստ 'ս, աւելի նպատակայարմար կ'ըլլայ, երբ նախաձեռնութեան զիւանի ծրագիրը կարգացուի յօդուած առ յօդուած եւ բարեփոխութիւնները առաջարկուին, այս կերպով ժողովը լուսաբանուած կ'ըլլայ, եւ միանգամայն համազում կը գոյացնէ թէ՛ այս ծրագիրը աղէկ է թէ՛ չէ:

ԱՏԵՆ. ԷՖ. — Որովհետեւ Համարակալութեան զիւանն ալ այդ մասին տեղեկալիք ունի, ուստի, լաւագոյն ձեւն է կարծեմ, Վարչութեան ծրագիրը կարգացուած առնել, երկու տեղեկագրերուն մէջ եղած փոփոխութիւնները աւելցնել եւ այդ կերպով բարեփոխել:

ԴԱԽԻԹ ԷՖ. ՏԵՐ ՄՈՎՍԵՍԵԱՆ. — Եթէ Վարչութեան կանոնադիրը հիմ ըլլար, ինչ հարկ կար որ երկար բարակ ուսումնասիրուէր: Համարակալութեան զիւանի տեղեկագիրը Վարչութեան կանոնագրին վրայ պատրաստուած է, իսկ նախաձեռնութեան զիւանը, տուրքի բաշխման եւ գանձման մասին նոր եղանակ մը սահմանած է. կը խնդրեմ որ ժողովոյ քուէին ենթարկուի թէ ո՞ր ծրագիրը կ'ընդունի:

Հ. ԷՖ. ԱՐԱՄԵՆՑ. — Ժողովը՝ Ամենազին էֆի առաջարկած դրութեան տարբեր կերպով վարուելու իրաւունք չունի: Նախաքննիչ զիւաններու պաշտօնն է իրենց եկած օրինական խնդիրները քննել, եւ այս, կը կատարուի օրինական աշխատութեանց զիւանութեան համար, քանի որ ժողովին կողմէ մերժուած չէ նախորդ Վարչութեան տուրքի օրինադրը, հետեւաբար, նախաքննիչ զիւաններէն մէ-



կը իրաւունք չունի իր կողմէն նոր օրինադրի մը առաջարկելու, ուստի, կ'առաջարկեմ որ առանց ժամաւաճառ ըլլալու յօդուած առ յօդուած կարդացուի Վարչութեան պատրաստած օրինագիծը:

ՏՕՔԹ. ԹԵՐԶԵԱՆ ԷՖ. — Կ'ընդունիմ որ ոեւէ նախաքննիչ զիւան, կարծեաց տարբերութեան մէջ հաշտութիւն մը գոյացնելու համար առաջարկ բերէ, երբ մանաւանդ խնդիրը սկզբունքի կը վերաբերի, բայց, նախաձեռնութեան զիւանի պատրաստած տեղեկագիրը տուրքի խնդրոյն համար, բոլորովին կը տարբերիւ կը հակառակի նոյն իսկ սահմանադրական տրամադրութեանց, այնպէս որ, երկու տեղեկագիրներու մէջ ահալին տարբերութիւն կայ: Սահմանադրական կեանքի մէջ այս բանը ներելի չէ կարծեմ, ուստի, կ'առաջարկեմ, յօդուած առ յօդուած կարդալ Վարչութեան պատրաստած կանոնագիրը եւ պէտք եղած բարեփոխութիւններով քուէի դնել զայն, որովհետեւ Ազգ. Տուրքը, թաղային տուրքին հետ թաղերէն գանձել տալու նման առաջարկներ կան որոնք սկզբունքի տեսակէտով, հիմնական եւմեծ փոփոխութիւններ են:

Ե. ՇԻՐԻՆԵԱՆ ԷՖ. — Ազգ. Ժողովին ընկիւր գործը կամ Վարչութեան եկած կանոնագիրը ընդունիլու կամ բարեփոխել է, այսօր երկու գիւանները միեւնոյն ծրագրին համար իրենց տեսութիւնները բերած են, Ժողովը նկատողութեան պիտի առնէ զանոնք, եւ իր որոշումը տայ, բայց ամէն պարագայի մէջ, Ժողովու առջեւ գտնուածը երկու տեղեկագիրէ եւ ոչ թէ մէկ: Ազգէն, նախաձեռնութեան զիւանի տեղեկագիրն մէջ կան այնպիսի առաջարկներ որոնք անգործնական են, օրինակի համար, ազգային տուրքը պիտի վճարուի թաղային տուրքին հետ, բան մը որ ոչ կրնայ վճարուիլ եւ ոչ ալ գանձուիլ: Եւ արդէն ինչ հարկ այսպիսի գծաւորութեանց մէջ մտնելու, Սահմանադրութիւնը այնքան լաւ կերպով ներկայ սցուցած է ազգային տուր-

քի բաշխու մը եւ գանձումը որ եթէ գործադրուի ճշգրտութեամբ, ու եւ զփութարուութեան պատճառ չմնար, հետեւաբար ետ ալ կ'առաջարկեմ որ Համարակալութեան զիւանի կատարած բարեփոխումները նկատի առնուին Ժողովին մէջ, նախաձեռնութեան զիւանի առաջարկութեան մէջ կայ նաեւ առաջարկ մը՝ զրամով իրենց տուրքը չի վճարողներու բերքէն գանձելու մասին, ասիկա, կարծեմ թէ աչառի գրութիւն հաստատելու պէս բան մընէ, որուն կիրարկումը, որքան անհար ըլլալը հասկանալի է անշուշտ: Ամէն պարագայի մէջ եւ իրաւունք կուտամ Վարչութեան իր ուզած ծրագրին չուրջ վիճաբանութիւն կատարել տալու:

ԱՐԻՍՏԱԿԵՍ ԷՖ. ԳԱՊԱՐԵԱՆ. — Երբ Վարչութեան կողմէ ծրագիր մը կը ներկայացուի, իրեն յաջորդը կրնայ իրաջնել կամ մերժել զայն, եւ կը կարծեմ որ նախաձեռնութեան զիւանը իր իրաւասութիւնէն դուրս ելած է, ինք, ուրիշ ծրագիր պատրաստելու իրաւունք չունի: Հիմայ, որ նախաքննիչ զիւանները ինչորոյ կազմուեցան, կ'առաջարկեմ որ Ժողով մէկդի ձգէ նախորդ նախաձեռնութեան զիւանին պատրաստած ծրագիրը եւ քննէ արդի Վարչութեան իւրացուցած տուրքի կանոնագիրը Համարակալութեան զիւանին պատրաստած տեղեկագիրին հետ: Նախաձեռնութեան զիւանի անդամները այստեղ ներկայ են, ու իրենց կարծիքը ու զիտողութիւնը կրնան յայտնել:

Ա. ՎՈՒԱՄԵԱՆ ԷՖ. — Եւ կը կարծեմ թէ առանց հարցը աւելի մանրամասն ուսումնասիրելու, այնքան արագ կերպով առաջարկուած փոփոխութիւններ չենք կրնար ընել կանոնագրին մէջ, վասն զի կը տեսնենք որ անոնք իսկ որ կը խօսին ընդդէմ առաջարկուած բարեփոխութեանց, մօտէն տեղեկի չեն երկրի պայմաններուն եւ առհասարակ անդիմադրելի կայ խնդրոյն նկատմամբ: Եթէ աչգային տուրքը փոխանակ զրամի, բերքէն գանձե-

լու եղանակը տասանորդի գրութիւն կը համարուի, կը կարծեմ թէ աւելի խնայելի ձեւն է որ կը քննադատուի որովհետեւ ըստ գրութեան կը գործադրուի, արդէն նոյն էութիւնը եւ շատ տեղեր հիմայ փոխանակ կանխիկ գրամ տալու իրենց բերքէն կը վճարեն իրենց տուրքը, աշխան եղանակին երբ կալ կըլլայ Շատ տեղեր զարոցները այս կերպով կը պահպանուին եւ այդ կերպով կը հաւաքուին տուրքերը, քանի որ Ժողովուրդը ի վիճակի չէ իր հնչուն գրամը մօցնելու առաջնորդարանի գանձին մէջ: Այս բաները կը ցնչեն թէ ինչ որ կը կարծեն թէ նոր կը գործադրուի, անոնք արդէն իսկ գործադրութեան մէջ են: Այս բացատրութիւնները աւելի յետոյ, եւ կը կարծեմ որ հարցը նախաձեռնութեան զիւանի կողմէ ալ պէտք եղած կերպով ուսումնասիրուած չէ, որովհետեւ քննութեան առարկայ չէ եղեր թէ ինչ կերպով պիտի կազմել պէտք է, որովհետեւ քաղաքային աշար տեղի բիչ տուրք կը վճարէ քան թէ զի զայն: Հետեւաբար Ազգ. Վարչութիւնը հարկ է որ գ'անայ թէ ինչ պայմաններու մէջ հնուրաւ որ է այս գանձումը: Ըստ իս 10 զրչը մեծ բան է գաւառի Ժողովրդի համար, երբ միմիայն առաջնորդարանի ծախսը պիտի յատկացուի, ուստի եւ կը կարծեմ որ այս կերպով չիրադրուած մեր բնականաւոր, այլ պէտք է որ աչգ. ընդհանուր մասկարարութիւնը տչքի աշխուռնեալ այսինքն թէ ազգը որքան կալուածներ ունի որոնցմէ չօգտուի, ինչպէս նաեւ վասական կ'ալուածներ, որոց հասոյթը իրեն ոչ օգուտ չապահովեր: Այս պարագաները ոչ նկատի առնելով մանաւանդ տեսնելով՝ որ նախաձեռնութեան զիւանը նոր է եւ այժմ այս Ժողովին մէջ իր տեղեկագրերը չունի կ'առաջարկեմ որ վերստին աշարքութեան յանձնուի այս կէտը նախաձեռնութեան նորոնարի զիւանին յառաջիկայ նիստին իրենց տեղեկագրերով ներկայանալու համար որպէս զի Ազգ. Ժողովը կարենայ վիճաբանութիւն կատարել, առաջարկուած նոր ձեւի մը վրայ:

ԱՏԵՆ. ԷՖ. — Նախաձեռնութեան զիւանի տեղեկագիրը, նոր կազմուած նոյն զիւանին անդամ ընտրուած է: Մեզի համար կարեւոր է այդ վիճաբանութեան մէջ որոշել առ կէտը թէ, նախորդ Վարչութեան պատրաստած տուրքի կանոնագիրը հիմ պիտի ունենանք թէ նախաձեռնութեան զիւանի տեղեկագիրը: Նախ եւ առաջ աւոր վրայ խօսինք:

ԴԱԼԻԹ ԷՖ. ՏԵՐ-ՄՈՎՍԵՍԵԱՆ. — Եթէ խնդրոյն անցեալ պարագաներուն չհետեւինք, չենք կրնար որոշ եղրակացութեան մը հասնիլ, եթէ արդի Վարչութիւնը իր նախորդին՝ կարծիքը իւրացուցեր հոս բերել է, նախորդ Վարչութիւնը այս Ժողովին մէջ այդ խնդրոյ մասին կարծիք չկրնար յայտնել: Հետեւաբար այս Ժողովը այժմ կրնայ զրադիլ այս խնդիրներով, երբ նախաձեռնութեան զիւանը իր տեղեկագիրը բերած է, այս Ժողովը պէտք է քննէ զայն, իսկ նախորդ Վարչութեան բերած տեղեկագիրին յօդուած առ յօդուած ընթերցումը օրէնքի հակառակ կը նկատեմ, այս տեղ թէ՛ Համարակալութեան եւ թէ՛ նախաձեռնութեան զիւանի տեղեկագրերը ներկայ կը գտնուին, կրնան իրենց ծրագիրները պաշտպանել: Չեմ կարծիք որ աւոր հակառակելու պատճառ ըլլայ:

ՏՕՔԹ. Ա. ԹԵՐԶԵԱՆ ԷՖ. — Ազգ. Տուրքի խնդիրը այսքան ատեն է որ ձգձգուեցաւ, եւ այլ եւս այս ձգձգումը երկարելու պէտք չեմ տեսներ, կանոնին տրամադրութիւնը այնպէս է որ, ու եւ զիւանի մը կողմէ ներկայացեալ ծրագիր այս Ժողովին մէջ վիճաբանութեան առարկայ կրնայ ըլլալ, սակայն օրէնքի վերաբերեալ ծրագիրները միշտ գործադիր իշխանութեան կողմէ կը ներկայացուին, գալով Վասական Էֆ.ի, զեւելիւտում թէ պատրաստուած այս կանոնը Պատրիարքարանի անտուկի տուրքին համար է, իսկ Ազգ. մասաւորարութեան մէջ միւր ծրագրերը ապակեղորոնայման սկզբունքին համաձայն կազմուած են, կը կրկնեմ գարծեալ որ յօդուած առ



յօդուած կարգացուի նախորդ Վարչութեան բերած կանոնադրեր:

ԱՏՆՆ. ԷՖ. — Կը կարծեմ որ այսքան վիճարանութիւն բաւական է: Պատկ. Ժողովը Վարչութեան յանձնած էր տուրքի կանոնադրին պատրաստութիւնը եւ այն ալ իւր եզրակացութիւնը բերեր է: Արդի Վարչութիւնը կ'ըսէ թէ ես ալ կընդգրկեմ իմ նախորդիս կարծիքը: Երկու գիւսանիւսը եզրակացութեանց մէջ էական եւ հիմնական տարբերութիւններ կան եւ ծրագիրներն ալ տարբեր տարբեր են ինչպէս կը տեսնէք: Ուստի նախ եւ առաջ բարեհաճեցէք սա կէտին վրայ կարծիք յայտնել որ, նախորդ Վարչութեան ծրագրին վիճարանութիւնը պիտի կատարենք միեւնոյն ատեն առաջարկուած բարեփոխութիւններն ալ նկատի առնելով թէ նոր ծրագիրը պիտի քննենք:

(Ժողովը 7ի դէմ 27 քուէով ընդունեց, քննութիւնը սկսիլ նախորդ Վարչութեան ծրագրին, միեւնոյն ատեն նկատի առնելով նաեւ առաջարկուած փոփոխութիւնները):

ԴԱԻԻԹ ԷՖ. ՏԷՐ-ՄՈՎՍԷՍԵԱՆ. — Ես այս կերպ քննութեան համարմտ չեմ եւ իմ բողոքս կուզեմ որ արձանագրուի:

ԱՏՆՆ. ԷՖ. — Շատ աղէկ կ'արձանագրուի:

(Ատենադպիր ԷՖ. կարգաց տրոց կանոնադրի առաջին յօդուածը, ինչպէս նաեւ նախաձեռնութեան գիւսանիւսը առաջարկուած փոփոխութիւնը):

Յ. ՉԷՕԳԻԻԲԵԱՆ ԷՖ. — Գաւառի հաշուիները ինչու կը պարտաւորենք որ ազգային տուրք վճարէ Պատրիարքարանի մատուկին, որովհետեւ մենք գիտենք որ Պատրիարքարանը Պոլսոյ եւ չրջանի հայութեան գործերով եւ Պոլսոյ խնդիրներով կ'ըրազի, հետեւաբար գաւառէն ինչո՞ւ տուրք պիտի պահանջենք:

ՉԱՅՆԵՐ. — (Ընդմիջելով) Սխալ է:

Յ. ՉԷՕԳԻԻԲԵԱՆ ԷՖ. — (Շարունակելով) Ես սկզբունքի խնդիր մ'է որ կը յուզեմ եւ այնպէս կը կարծեմ որ Սահմանադրութիւնը հաստատուած է Պոլսոյ եւ չրջակայից հայութեան համար:

ՏՐ. Գ. ԴԱԻԻԹԵԱՆ ԷՖ. — Ես ցուցակներով կրնամ ազգացուցանել այսօր որ Վարչութեան ամէն նիստին մէջ շատ աւելի կ'ըրազինք գաւառի գործերով, քան թէ թեղական խնդիրներով: Պատրիարքարան եկած խնդիրներուն 100ին 90ը գաւառի 10ը Պոլսոյ կը վերաբերին:

Ա. ՎԱՍԻԿԱՆ ԷՖ. — Ես կուզեմ վերստին խօսիլ եւ պատասխանել կարգ մը առարկութեանց: Ազգային տուրք հաւաքել եւ ազգային ու եւ բարեկարգութիւն ի գործ չդնել, կը նմանի Հայաստանի մէջ ճամբու սուրբ հաւաքելով, ճամբայ չլինելուն: Ազգը ժողովուրդն է եւ երբ ժողովուրդը կը տեսնէ որ իր զարգացումը, վանքերը կը մնան առանց ունէ խնամածութեան, ինչպէ՞ս պիտի համոզէք զինքը որ իւր վճարելիք ազգային տուրքը ազգին պէտքերուն համար կը գործածուի: Ասկէ զատ այդ մատակարարութիւնները չունին նաեւ իրենց պիտանքները եւ հաշիւները, որպէս զի կարելի ըլլայ հասկնալ թէ ինչ գանձեր եւ ինչ ծախսեր են: Ես վան գտնուած էի ասկէ վեց տարի առաջ, երբ եթէ չեմ սխալիր Ս. Պատրիարքը առաջնորդ էր Վանայ, այն թուականին ալ տեղական տուրք հաստատուեցաւ Վանայ մէջ, բայց չվճարուեցաւ, ինչ է պատճառը, եթէ ազգային տուրք է պէտքէ վճարուի. ինչո՞ւ ժողովուրդը իր քահանայական եւ ուրիշ պէտքերուն համար տուրք կը վճարէ եւ իր ազգին մատակարարութեան չվճարիր, ասիկա չահագորգութիւն ինչի խնդիր մ'է: Յետոյ ազգ. տուրքի համար նուազագոյն քանակութիւնը 10 դրը ընդաւած է, մինչդեռ ես կըսեմ որ 5 դր. պէտք է ըլլայ, որովհետեւ գաւառներու համար 10 դր. ը բաւական

կարելորդ գումար մ'է: Այս պարագաներու մէջ ես ուղիղ չեմ գտնիր. երբ դուք կ'աճապարէք մերժելով նախաձեռնութեան գիւսանի տեղեկագիրը, որ ազգային ընդհանուր պէտքերը կեդրոնացնելու սկզբունքին վրայ հիմնուած է. ուստի պէտք է այս մասերը մոցնել ազգային տուրքին մէջ ապա թէ ոչ ազգ. Սահմանադրական տուրք չենք կրնար ըսել: Հետեւաբար կը մերժեմ եղած առարկութիւնները եւ ժողովրդային հոգեբանական վիճակը ըմբռնելով՝ խորքին այդ կերպով սահմանուելուն պէտք կ'զգացնեմ:

ԱՏՆՆ. ԷՖ. — Տեղի ունեցած վիճարանութիւններէն հետեւցնելով կրնամ ըսել որ, եթէ աղէկ մը ըմբռնուած ըլլային ազգային Սահմանադրութեան տրամադրութիւնները, կարծեմ թէ խնդիրը այսքան չպիտի դժուարանար Սահմանադրութեան 90րդ յօդուածը այսպէս կ'ըսէ:

Յօդ. 90. Ամեն ազգային ամհաս որ չափահաս է եւ վասակ ու ճանու ճեռ, պարսական է սոք մասնակից ըլլալ ազգային ծախուց:

Այս տուրք սարեկան է. եւ բաշխման համար հիմ կը բռնուի իւրաքանչիւր անհատի կարողութիւնը:

Այս յօդուածը ինչպէս կ'տեսնէք կը խօսի տուրքին սկզբունքին վրայ, այսինքն կորոշէ թէ որ կարգի մարդիկ տուրք պիտի վճարեն: Անցնինք հիմայ յաջորդ յօդուածին:

Յօդ. 91. — Ազգային տուրք երկու տեսակ է, մէկը ընդհանուր՝ որ ընդհանուր ծախուց յաւակցեալ է. եւ կը հաւաքուի Պատրիարքարանի կողմէն, Ազգ. Անդրոնական սնուկին համար. եւ միւսը մասնաւոր՝ որ իւրաքանչիւր քաղի մասնաւոր ծախուց յաւակցեալ է, եւ կը հաւաքուի թաղական կործնոց կողմէն, թաղական սնուկներուն համար:

Այս յօդուածէն ինչպէս ալ կ'երեւայ որոշ կերպով՝ երկու տեսակ տուրք կը ճանչնայ Սահմանադրութիւնը, մէկը Պատրիարքարանի, իսկ միւսը թաղային ծախուց յաւակցեալ: Ասոնցմէ վերջ կարգաւ 62րդ յօդուածը:

Յօդ. 92. — Կոստանդնուպոլսոյ մէջ ընդհանուր տուրքի բաշխման եւ հաւաքման եղանակը՝ Քաղաքական ժողովին մէջ կ'որոշուի, եւ ընդհանուր ժողովով կը հաստատուի: Իսկ մասնաւոր տուրք՝ ամեն քաղ իր կործնոց մէջ կ'որոշուի եւ կը հաստատուի:

Սոցապէս կը տեսնուին նաեւ գաւառներու մէջ Գաւառական ընդհանուր տուրքն ու թաղական մասնաւոր տուրքը:

Ասկէ ալ կը հասկցուի որ գաւառներու մէջ ալ ճիշտ Պոլսոյ մէջ եղածին նման պիտի ըլլայ, այսինքն գաւառական ընդհանուր տուրք մը եւ թաղային մասնաւոր տուրք մը պիտի հաւաքուի եւ գաւառի ազգային տուրքը պիտի որոշուի Գաւառ. ժողովին մէջ: Մենք Սահմանադրութենէն դուրս չենք կրնար ելլել մեր պատրաստելիք օրէնքներու ու կանոններէն: Հիմը Սահմանադրութեան այս տրամադրութիւնները պիտի ըլլան:

ԴԱԻԻԹ ԷՖ. ՏԷՐ ՄՈՎՍԷՍԵԱՆ. — Ազգ. ժողովը այստեղ օրէնքին սկզբունքն է որ պիտի որոշէ, առաջնորդները կրնան հնչուն գրամով գանձել, կամ փոխարէն ընդունիլ, ամէն պարագայի մէջ, կարելորդ է որ նախ եւ առաջ սկզբունքը որոշուի:

Ա. ՎԱՍԻԿԱՆ ԷՖ. — Եթէ առանց Սահմանադրութենէն հետեւալու, այս հիման վրայ պիտի կատարուի օրէնքին ընդհանուրութիւնը, ես ըսելիք չունիմ, իմ ըմբռնած ազգային ընդհանուր տուրքի կանոնն է:

ԱՏՆՆ. ԷՖ. — Ուրեմն տուրքի կանոնադրին Ա. յօդուածը եւ նախաձեռնութեան գիւսանի կանոնադրին առաջին յօդուածը կը կարգաւոր:



Յօդ. 1. — Համաձայն Ազգ. Սահմանադրութեան 90 եւ 91 յօդուածներու տրամադրութեանց, 21 տարեկանը քեւակոխած եւ ո՛ր եւ ի վասակի կամ կեամուսի տեւ ամեն ազգային անհաս պարտաւոր եւ ընդհանուր տուրք մը վճարել: Պոլսոյ մէջ՝ Ազգ. Պարտաւորանքի Կեդր. Սնուկին, իսկ գաւառներու մէջ Առաջնորդարաններու սնուկներուն:

Յօդ. 1. — Ազգ. Սահմանադրութեան 90 եւ 91-րդ յօդուածներուն տրամադրութեանց համաձայն Ազգային տուրքը պարտաւորիչ եւ 21 տարեկանը քեւակոխած եւ ուր եւ ի վասակի կեամուսի տեւ ազգային անհասներու համար:

Տ. ՎԱՀՐԱՄ ԱՐՔԵՊՍ. — Յիշուած տարիքը զինուորագրութեան յատուկ տարիք է, հետեւաբար պէտք է կարծեմ փոխել:

Տ. ԵՂԻՇԷՆ ԱՐՔԵՊ. — Ես ալ այդ կէտը պիտի յիշեցնէի, տուրք դանձելու համար այդ տարիքը անյարմար է:

ԱՏԵՆ. Է.Ֆ. — Ուրեմն կ'առաջարկէք որ 18 տարեկանէն սկսուի ազգային տուրք դանձել:

Տ. ՎԱՀՐԱՄ ԱՐՔԵՊ. — 18 տարեկանը քիչ կը պատահի որ վատասակի տէր ըլլայ:

Դ. Է.Ֆ. ՏԵՐ-ՄՈՎՍԷՍԵԱՆ. — Նոր պատրաստուած կանոնի մասին եղած ընդհանրատուութիւնները լսեցինք: Մենք հակառակ չենք այն ամէն առաջարկներուն, որոնք կ'ըլլան գործադրելի բան մը մէջ տեղ հանելու համար: Գործադրելի ու եւ է առաջարկ ընդունելու կողմն ենք: Մենք այս կանոնին խմբագրութեան առթիւ մեծածաղկի ըլլան դատարաններու համար եւ որովհետեւ շատ տեղեր զրամով վճարում անկարելի է, այդ պատճառաւ կարգ մը դիւանագիւղի պայմաններ զինել յարմար

դատուեցաւ: Դիտողութիւն եղաւ թէ 21 տարեկանը չափահաս կրնայ նկատուիլ: Մենք կը կարծենք թէ 15 տարեկանն ալ չափահաս է, բայց 21-ը որոշապէս ընդունուած տարիք մ'է եւ հետեւաբար այդ պատճառաւ նոյն տարիքը հիմ թոնեցինք:

Մ. Է.Ֆ. ՀԱՅԿԱԶՆ. — Խնդիրը միայն տուրք վճարելուն մէջ չէ, այս պայմաններով 21 տարեկան անձը քուէ տալ պիտի ուզէ, մեր օրէնքը կը թոյլատրէ առիկա:

ԱՏԵՆ. Է.Ֆ. — Սահմանադրութիւնը որոշած է թէ քանի՞ տարեկան անձեր կրնան քուէ տալ, հետեւաբար այդ մասին ու եւ է փոփոխութիւն կարելի չէ: Ուրեմն վարչութեան պատրաստած կանոնագրի առաջին յօդուածին վերջին տողերը ջնջելով, այդ յօդուած ընդունուած է: Նախաձեռնութեան դիւանի առաջարկած առաջին յօդուածը ալ այս իմաստով է: Անցնինք եկրորդ յօդուածին:

(Ատենագիր է ֆ. կարգաց երկրորդ յօդուածը):

Յօդ. 2. — Ազգային տուրքի մէկ բաժինը 10 դր. է: Ամեն ազգային անհաս, իր կարողութեան համեմատ կը վճարէ մինչեւ 50 բաժին, որմէ աւելին կամաւոր եւ եւ նուեւ կը նկատուի:

Յօդ. 2. — Ազգային տուրքը պարտաւոր կերպով սահմանուած է թաղային, վիճակային եւ Կեդրոնական Սնուկներու ազգային ծախսերուն յատկացուելու համար:

Դ. Է.Ֆ. ՏԵՐ-ՄՈՎՍԷՍԵԱՆ. — Ազգ. տուրքի վճարումը սահմանուած էր Ատենագրութեան կողմէ: Կարգացած յօդուածներուն մէջ Այդ տուրքը հիմայ թաղեցիները կը վճարեն, մենք կուզենք հիմայ որ ամէն տեղ կանոնադրութիւն մը ըլլայ վճարման մէջ եւ կեդրոնը իր բոլոր մասերով կանոնադրապէս գանձէ այս տուրքը: Այս պատճառաւ ազգային տուրքին թէ դանձման եւ

թէ արդիւնաւորութեան համար պայմանները զրուած են, օրինակի համար . . .

ԱՏԵՆ. Է.Ֆ. — (Ընդմիջելով) Խնդրէն պէտք չէ շեղիլ:

ԴԱԽԻԹ. Է.Ֆ. ՏԵՐ-ՄՈՎՍԷՍԵԱՆ. — (Շարունակելով) Հոս տուրքի կանոնագիր մը կը քուէարկուի, եւ իրեն տեղեկաբերիմ իրաւունքիս մէջ կը գտնուիմ խօսելու այդ կանոնագրի վրայ, եթէ կուզէք որ առանց պարզուելու խնդիրը քուէարկութիւն տեղի ունենայ, ասիկայ նպատակաւորմար չի կրնար ըլլալ. հետեւաբար ժողովը պէտք է նկատողութեան առնէ այն ամէն յայտարարութիւնները որոնք կ'ըլլան առաջարկուած բարեփոխութեանց մասին:

Գ. Տ. ԿԱՐԱՊԵՏԵԱՆ. Է.Ֆ. — Սահմանադրութիւնը 50 տարիէ ի վեր գործադրութեան մէջ է, բայց մինչեւ այսօր չաւ մը կէտեր չկրցան գործադրուիլ: Վընասման է ֆ. բրած կարգ մը առաջարկները անհրաժեշտ է որ նկատողութեան առնուին: 10 դր. ազգային տուրքի նուազագոյն քանակը ընդունուած է, բայց պէտք է գիտնալ թէ, զանազան գաւառներու համար վիճակը բարբոթի տարբեր է: Ազգ. տուրքի քանակը եւ վճարման եղանակը հիմայ կը տարբերի տեղ տեղ կան տեղեր ուր պողի ալ կուտան: հետեւաբար երբ ազգային ընդհանուր տուրք հաւաքելու համար ձեռնարկներ կ'ըլլան, գաւառներու վճարելիք տուրքը պէտք է նկատողութեան առնուի:

Ա. ՎԱՐՍԵԱՆ. Է.Ֆ. — Ես սերտիս եմ որ այստեղ գաւառի հայութեան համար բաւական կարեւոր առաջարկներ կը ներկայացուին: Եթէ նիւթական վճարման խնդիրներ են որ կը յուզուին, պէտք է նկատողութեան առնենք որ տուրքին զանազան առիթները քաղաքէ քաղաք կը տարբերին իրարմէ: Օրինակի համար ծովազերեայ քաղաքներ կան որոնք իրեն յատկապէս կ'ընդունեն կը տարբերին

ներքին գաւառներէն ուր ժողովուրդը աւելի աղքատ է: Օրինակի համար այս կարգէն են Սասուն եւ Զէյթուն, որոց համար 10 դր. ը չաւ կարեւոր գումար մ'է: Պէտք է նկատողութեան առնենք գիւղացի հայութեան վիճակը երբ խնդիրը կը վերաբերի անոնց:

ՏՈՒԹ. ԹԵՐԶԵԱՆ. Է.Ֆ. — Մենք գաւառը ձեզմէ աւելի կը սիրենք:

ԱՏԵՆ. Է.Ֆ. — Ամէնքինից ալ բարեբաժ կը խօսիք, ես կը կարծեմ թէ այս ձեւով կարելի չէ գլուխ հանել վիճարանութիւնը, այլ իրար հակադրուի: Դիտել կ'ոտամ ձեզի որ Նախաձեռնութեան դիւանի ծրագրով առաջարկուած բարեփոխութիւնները, ժամանակին ալ փորձուեցաւ, բայց կարելի չեղաւ գործադրութիւնը, հետեւաբար մենք հիմայ պէտք է փորձենք այն պիտի զրուցենք մը որ գործադրելի ըլլայ:

Ա. ԲԱՐՍԵՂԵԱՆ. Է.Ֆ. — Տուրքի կանոնագրին երկու յօդուածներու ընթերցումը, պէտք եղած կերպով չկրցաւ լուսարանել խնդիրը: Կ'ըսուի որ Պոլսոյ Պատրիարքարանի յատուկ տուրքն է այս, բայց գաւառի համար ալ ակնարկութիւն կայ կարգացում յօդուածներուն մէջ եւ տեղէ գաւառ, ազգը միայն որոշ դասակարգի մ: անձեր չին, հետեւաբար ազգ. տուրքի կանոնագիր բացառութիւնը ինքնին սխալ մ'է, ուրիշ խնդիր է եթէ գաւառի համար ալ զատ կանոնագիր կայ: Երբ որ ազգ. տուրքի բաժինը 10 դր. է այս տեղ, առաջինը չկայ բնաւ որ ասիկա չյարմարի գաւառի, եզրակացնելով կ'ըսեմ որ տուրքի խնդիրը ուսումնասիրելու խնդիր մ'է, հետեւաբար ինչ կարգադրութիւն որ ըլլայ պէտք է առաջարկուի հանգամանք ունենայ:

Դ. Է.Ֆ. ՏԵՐ-ՄՈՎՍԷՍԵԱՆ. — Ազգ. տուրքը մեր պատրաստած կանոնագրին մէջ բաժնուած է երեք մասի, թաղային, վիճակային եւ կեդրոնական, հետեւաբար



ես աւելորդ կը գտնեմ եղած դիտողութիւնները

Հ. ՊՅՍԱՆԱՆ ԷՖ.— Ես կարծեմ որ մեզի այսքան գրգռողը այն է, որ պատճառաւոր կանոնադրեր Պոլսոյ յատուկ է, եւ իբրեւ տուրքի նուազագոյն բաժին կառավարկուի 10 դրշ. ուրիշ մը կրնայ 5 դրշ. առաջարկել եւ այս ժողովը կրնայ ընդունիլ: Ներկայ պարագային մէջ յուղումը սկզբունքի հարց պէտք է ըլլայ, այսինքն թէ երբ հիմայ կ'ընդունինք որ մէկ բաժինը 10 դրշ. ըլլայ եւ առ առաւել 50 բաժին վճարէ ուսկից աւելի տուածը նուէր ըլլայ, պէտք է խորհիլ որ մէկը երբ 50000 ոսկի կը վասակի՝ եթէ տարին 500 դրշ.է աւելի գումար մը տայ իբրեւ ազգային տուրք այդ գումարէն աւելի տուածը նուէր պիտի ըլլայ եւ երբ գործը այս ձեւը կառնէ, բնականաբար այս տուածը գալ տարի չտար: Ուստի պէտք է սահման մը դրնել եւ այդ սահմանը կը դրուի միմիայն համեմատական տուրքի սկզբունքը ընդունելով, այսինքն իւրաքանչիւր անհատի կարողութիւնը ճշգրտելով և անկէ այդ համեմատութեամբ տուրք մը պահանջելով. իմ առաջարկս այս է անա եւ կը փափաքեմ որ այս կէտը նկատողութեան առնուի:

ՀԱՅԿ ԷՖ. ԽՕԱՄԱՍՐԵԱՆ.— Տուրքի խնդրին չուրջ ժողովին մէջ արտայայտուած կարծիքներէն կը հասկցուի թէ դժուարութիւնը կը ծնի առաջարկուած նոր դրութեան: Բայց պէտք է խորհիլ թէ տուրքի կանոն մը արդէն իսկ գոյութիւն ունէր եւ այդ օրէնքին համաձայն 25 դրշ.ի տուրքը կը գանձուէր: Եթէ մեր փափաքը ըլլար Ազգ. ժողովէն հաստատուած օրէնք մը ունենալ, զժուար չէր արդէն իսկ գտնուած օրէնքը բերել այստեղ եւ վաւերացնել: Իկս առաջարկելով ես վարչութեան բերած տուրքի կանոնադրը նորութեան զուրկ կը համարեմ, եթէ միակ նորութիւնը տուրքին նուազագոյն չափը 10 դրշ.ի իջեցնելու ճգճիմ խնդրոյն չուրջը կը գտնար, կրնար վարչութիւնը գործադ-

րութեան մէջ եղած կանոնադրին մէջ յօդուածին սրբագրութիւնը առաջարկել կամ յաւելուածական յօդուածով կանոնադր մը բերել հոս: Նորութիւնը դրութեան փոփոխութեամբ կրնար ըլլալ, ինչպէս մտածած է Նսիւսաձեռնութեան զիւանը: Տուրքի հիմնական սկզբունքը ի դիւանէ կարգադրուած Սահմանադրութեան յօդուածներու մէջ կը տեսնուի եւ անոնք բնականաբար անխախտ կը մնան, բայց կրնայ կազմուիլ յանձնաժողով մը, որ ներկայացնուի բոլոր գրութիւնները ուսումնասիրելով եւ լայն սահմանի մէջ խտացնելով արտայայտուած կարծիքները արդիւնքը բերէ ժողովին:

ԱՏԵՆ. ԷՖ.— Կը տեսնեմ որ սխալ հասկացողութիւններ կան պատրաստուած օրէնքի մասին, հետեւաբար արդեօք լաւ չըլլա՞ր որ Ատենապետաց զիւանին յանձնուի խնդիրը, ուսումնասիրելու բոլոր ծրագրերը եւ ընդհանուր եզրակացութիւն մը հանելու ու բերելու համար: Եթէ այս առաջարկը ընդունողներ կան կրնան յայտնել իրենց միտքը:

Ս. ԷՖ. ԷՍՄԷՐԵԱՆ.— Ես պէտք չեմ տեսներ որ այս կանոնադիրը առեւտրապետաց զիւանին յանձնուի, որպէս զի բոլորովին չմոռնի գործը: Ազգէն այս կանոնադիրը անմիջապէս գործադրելի ալ չէ ալ 1915ին պիտի սկսինք գործադրութեան: Ես երկու ծրագրերն ալ կարգադրի Նսիւսաձեռնութեան զիւանին պատրաստածին մէջ կան լաւ բաներ, կան նաեւ բոլորովին անմարտելի բաներ. լաւերէն կարելի է օգտուիլ: Վարչութեան պատրաստածին մէջ ալ կան անմարտելի բաներ, օրինակի համար, բնաւ ո եւ է պատճառ չկայ, որ սկզբային տուրքերէ մեր ունեցած պահանջը լաւ չենք, մանաւանդ երբ մտածուի որ այդ պահանջը ազնուապետական դասակարգէն է, որոնք ոչ կամ կանուխ գործ պիտի ունենան Պատրիարքարանի հետ, ու այդ պարտքերը պիտի գանձուին, հետեւաբար ինչ պատճառ կայ որ այդպի-

սինքնէ մեր ունեցած պահանջը լաւ չենք: Վերջապէս պէտք է այս կարգի բարեփոխութիւնները ընել, որովհետեւ ազգային տուրքը, ազրիւրը, հիմն է ամէն բարեկարգութեան եւ առանց անոր ոչ մարդագործում կ'ըլլայ եւ ոչ ալ ո եւ է բարեփոխութիւն: Ես կ'առաջարկեմ որ նախ քննենք վարչութեան առաջարկը, յետոյ անոր վրայ աւելցնենք Նսիւսաձեռնութեան զիւանի ծրագրին օգտակար դասուած մասերը: Սակայն ստիկա չպիտի կարենանք ընել, որովհետեւ այս ժողովը մեծ սխալ մը գործեց եւ մերժեց Նսիւսաձեռնութեան զիւանին կամ Դ. Տ. Մովսէսեան բարեկամին առաջարկը եւ անոր համար է որ բան մը չպիտի կարենանք ընել:

ՄԱՐԿՈՍ ԷՖ. ՆԱԹԱՆԵԱՆ.— Տուրքի խնդրոյն համար բաւական խօսուեցաւ: Բնական է որ Պոլսոյ ժողովրդեան նիւթական վիճակը գաւառի ժողովրդեան հետ կարելի չէ բաղդատել մանաւանդ տուրքի տեսակետով, հետեւաբար այս խնդիրը կառուար է որ նորէն ուսումնասիրուի: Բայց ես ուրիշ կէտ մը դիտել պիտի տամ. առաջին անգամ որ տուրքի խնդիրը երեսնամեակէ առաջ մեր զիւանի պիտի տայ և այլ առարկութիւններով զայն յետաձգելու կողմը կերթան, որովհետեւ պայման կը զԵՐՈՒՍ որ իրենց ազգային տուրքը չվճարողները ոչ ընտրող եւ ոչ ալ ընտրելի կրնան ըլլալ, եւ փոխանակ այս կէտերը ի վեր հանելու, կը պնդեն որ գաւառի իրաւունքը ունակոյն կըլլայ, լաւ կ'ըլլայ ուրեմն որ մեր սրտին ցաւ պատճառող այս կէտը երեւան դնենք, փոխանակ տուրքի կանոնադրի խնդիրը յաւիտենապէս առ կախ ձգելու: Ուստի թէ միայն Պոլսոյ համար է պատրաստուած կանոնադիրը, այդ պարագային պէտք չկայ բնաւ գաւառի խնդիրներ յուղելու, քանի որ գաւառական ժո-

ղովներն են որ պիտի սահմանեն այդ տուրքը, ինչպէս կը հասկցուի Սահմանադրութեան յօդուածներէն որոնք կարգադրուեցան քիչ առաջ:

ԱՏԵՆ. ԷՖ.— Քիչ առաջ ըրած առաջարկէս ի վեր դարձեալ զանազան կարծիքներ յայտնուեցան, ես անոնք ալ նկատողութեան առնելով, հասայ այն եզրակացութեան թէ, պատրաստուած ծրագիրները անգամ մ'ալ ուսումնասիրելու պէտք կայ: Մեր պատրաստած տուրքի կանոնագիրը Պոլսոյ ժողովրդեան Պատրիարքարանի անտուկին վճարելի տուրքը միայն կը սահմանէ, հետեւաբար առաջարկուած փոփոխութեան նմանք, Սահմանադրութեան վերաբնութեան առթիւ կրնան ներկատողութեան առնուիլ: Գաւառներու մէջ իրաւունք չունինք անոնց վճարելիք տուրքը աւելցնելու, հետեւաբար կը տեսնեմ որ ընդհանուր անպատրաստութիւն մը կայ: Այս վիճակը, յոյս չենք չենք ինձ որ յառաջիկայ նիստին եզրակացութեան մը յանգիլ կարելի պիտի ըլլայ, ուստի կը կրկնեմ քիչ առաջ ըրած առաջարկս, եթէ ժողովը կը հաւանի՝ ներկայացնուած տեղեկագրերը Ատենապետաց զիւանի կողմէ ուսումնասիրուին եւ ատենք Սահմանադրական տրամադրութեանց հետ հաշտեցնելով յառաջիկայ նիստին եզրակացութիւն կը ներկայացուի ժողովիդ: Ես կ'ստանձնեմ այս աշխատութիւնը կատարել տալ Ատենապետաց զիւանին մինչեւ յառաջիկայ նիստ, եթէ ժողովը կը հաւանի:

ՀԱՅԵՆԵՐ.— Շատ լաւ:

(Ատենան փակուեցաւ ժամը 6ին):

Ատենադպիր Ատենապետ

Ա. Կ. ԱԻՆՏԻՍԵԱՆ Կ. ՆՈՐԱՏՈՒՆԿԱՆ



(Գ. Վիճակ)

Գում գարու, Գումգարունի դուրս

69. Դաւիթ էֆենտի Տէր-Մովսէսեան  
70. Համբարձում » Պոյասեան  
71. Սարգիս » Սուին  
72.

Կէտիկ փաշա

73. Հմայեակ էֆենտի Արամեանց  
74. Յարութիւն » Ճանկիւլեան  
75. Յակոբ » Աւետիսեան  
76. Յակոբ » Նշանեան  
77. Ներսէս » Զաքարեան

Սամաթիա Ս. Գէորգ

78. Գրիգոր էֆենտի Զօհրապ  
79. Լեւոն » Սամսեան  
80. Հայկ » Խոնասարեան  
81. Պարգեւ » Փափագեան  
82. Լեւոն » Սեդրոսեան  
83. Ռուբէն » Փափագեան  
84.

(Ե. Վիճակ)

Գուգլունճուկ-Իճատիէ

85. Երուանդ էֆենտի Խորասան  
86. Լեւոն » Տէմիրճիպաշեան  
87. Ռուբէն » Զարդարեան  
88. Ռսկան » Մարտիկեան  
89. Կոստանիկ » Խաչատուրեան

Թով-գարու.

90. Գէորգ էֆենտի Սիմեոնեան  
Ղալաթիա-Պէյքոզ

91. Երուանդ էֆենտի Օտեան

Նաուլլ-գարու.

92. Նշան էֆենտի Գալպեան  
93. Տիգրան » Դանուկեան

Սամաթիա Ալմրմէրմէր

94. Պետրոս էֆենտի Գալիսեան

Սկիւտար Ս. Խաչ

95. Բարսեղ էֆենտի Աւետիսեան  
96. Գաբեգին » Տէմիրճիպաշեան  
97. Յարութիւն » Շահրէկեան  
98. Վարդգէս » Սէրէնկիւլեան  
99. Յակոբ » Մինասեան

Րումէլի-Ֆիսար, Պոյասը-գիւղ, Եէնի-գիւղ

100. Աբրահամ էֆենտի Տէր Յակոբեան

ԳՍԱՍԱՌԱՅԻՆ ԵՐԵՍՓՈՆԱՆԻ

(Ա. Վիճակ)

Եգիպտոս

101. Վահան էֆենտի Թէրեան

Եւդոկիա

102. Յակոբ էֆենտի Պոննուգեան

Խարբերդ

103. Տօբթ. Փաշայեան էֆենտի

Կարին

104. Սողոմոն էֆենտի Տէր-Ազարեան

Կիւրին-Մանճըրթ

105. Աբամ էֆենտի Անդոնեան

Մուշ

106. Գեղամ էֆենտի Տէր-Կարապետեան  
Զմշկաձագ-Զարսանճագ

Տրապիզոն

108. Օնիկ էֆենտի Զիֆթէ-Սարաֆ

(Բ. Վիճակ)

Աղթամար

109. Ա. Վառամեան էֆենտի

Բալու

110. Գամըր էֆենտի Շիրինեան

Եօզրատ

111. Աւետիս էֆենտի Ճինիվիզեան

Կեսարիա

112. Վահան էֆենտի Էսսեան

Հալէպ-Այնթապ

113. Սարգիս էֆենտի Գնասեան

Նիկոմիդիա

- 114.

Պաղտատ

115. Տօբթ. Ներսէս էֆենտի Թիւլեան

Սղերդ

116. Սերովբէ էֆենտի Նորատունկեան

(Գ. Վիճակ)

Ակն

117. Ատովմ էֆենտի Երեցեան

Արարկիր

118. Արթուրի էֆենտի Սարաֆեան

Եդեսիա

119. Սեպուհի ալէյ Իւթիւսեան

Զգլիւռնիա

120. Լեւոն էֆենտի Տնտեսեան

Հաճըն

121. Տէվէթ էֆենտի Տատրեան

Մալաթիա

- 1 2.

Պանտրմա-Պալլաքէսիր

123. Տիրան էֆենտի Երկանեան

Վան

- 124.

(Գ. Վիճակ)

Ադրիանուպոլիս

- 125.

Ատանա

126. Արիստակէս էֆենտի Գասպարեան

Բաղէշ

127. Աղէքսանդր էֆենտի Փանոսեան

Կուտինա - Աֆիօն-Գարա-Ֆիսար

128. Զարեհ էֆենտի Խօրասանեան





- Պրոնսա**
129. Գասպար Էֆենտի Նեմցե  
Ռօտունթօ
130. Միհրդատ Էֆենտի Հայկազն  
Տիգրանակերտ
131. Տիգրան Էֆենտի Նազաշեան  
Տիվրիկ
- 132.
- (Ն. Վիհակ)
- Ամասիա—Մարզուան
193. Տիգրան Էֆենտի Մարտիկեան  
Բաբերդ
194. Յարութիւն Էֆենտի Դարբինեան

- Գաղատիա**
135. Տր. Խաչիկ Էֆենտի Պօղոսեան  
Գոնեա
136. Բարթող Էֆենտի Զօրեան  
Երզնկա
137. Գարրիէլ Էֆենտի Նորատունկեան  
Մարաշ—Ջէյթուն
138. Սմբատ Էֆենտի Բիւրատ  
Շապիւն—Գարափիսար
139. Ժագ Էֆենտի Սայապալեան  
Սերաստիա
140. Տօքթ. Նազարէթ Էֆենտի Տաղաւարեան

## Գ Ի Ն 1 Ղ Ր Ո Ւ Շ

Սեփականութիւն Ա.գգ. Սնտուկին, Ա.գգ. Ժողովոյ ծախուց յատկացեալ  
Կը ծախուի յազգային Խորհրդարան Ղալաքիոյ